Վերապատրաստվող ուսուցչի հետազոտական աշխատանք

Հետազոտության թեմա՝

Ինտերակտիվ ուսուցման մեթոդի կիրառման արդյունավետությունը կրտսեր դպրոցում

Դպրոց՝ Շիրակի մարզ, «Սպանդարյանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

Վերապատրաստվող ուսուցիչ՝ դասվար Սուսաննա Բարսեղյան

Մենթոր ուսուցիչ՝ Նարինե Զաքյան

Երևան 2022

Բովանդակություն

Ներածություն

Գլուխ 1. Ինտերակտիվ ուսուցման մեթոդի կիրառման արդյունավետությունը կրտսեր դպրոցում

1.1 Ինտերակտիվ ուսուցման մեթոդի էությունն ու հիմնական սկզբունքները
1.2 Ինտերակտիվ ուսուցման մեթոդի կիրառման արդյունավետությունը կրտսեր դպրոցում

Գլուխ 2. Հետազոտական աշխատանք

2.1 Ինտերակտիվ ուսուցման մեթոդով իրականացվող դասի ծրագիր
2.2 Ինտերակտիվ ուսուցման մեթոդով իրականացվող դասի ծրագրի կիրառումն ու վերլուծությունը

Եզրակացություն

Գրականության ցանկ

Ներածություն

Կյանքի արագ ընթացքին զուգահեռ, ամեն տարի, ամեն օր ուսուցման բնագավառում հայտնվում են նորարարություններ, որոնց ներմուծումը կրթական ոլորտ նպատակ է հետապնդում հեշտացնելու և ավելի արդյունավետ դարձնելու դասաժամը, մատչելի դրաձնելու դասավանդելիք նյութը: Քանզի ապրում ենք տեխնիկապես հագեցած ժամանակաշրջանում, հասկանալի է, որ կրթական ասպարեզում անհրաժեշտություն կա ինտերակտիվ ուսուցման իրականացման, որը կանցկացվի տեխնիկական տարբեր միջոցների օգնությամբ: Ինտերակտիվ մեթոդն առավել ուսումնասիրված և արդյուանվետ մեթոդ է համարվում, այդ իսկ պատճառով փորձեցինք մենք էլ մեր հետազոտական աշխատանքը ներկայացնել այս մասով: Ըստ մեր ունեցած վարկածի, ինտերակտիվ մեթոդի շնորհիվ նոր դասավանդվելիք նյութը կհետաքրքրի սովորողներին, առավել հեշտ կյուրացնեն նոր նյութը:

Մեր գլխավոր նպատակն է կրտսեր դպրոցականների հետ իրականացնել դաս՝ ինտերակտիվ մեթոդների կիրառմամբ: Այդ իսկ պատճառով նպատակ ենք դրել կազմել, ապա նաև կիրառել ինտերակտիվ մեթոդով մի քանի դաս՝ հասկանալու և դուրս բերելու մեթոդի արդյունավետությունը, ուժեղ և թույլ կողմերը: Այս նպատակն իրականացնելու համար մեր առջև դրել ենք հետևյալ խնդիրները՝

- Ուսումնասիրել ինտերակտիվ մեթոդի մասին գիտական նյութեր:
- Ուսումնասիրել մեթոդի կիրառման փորձը:
- Կազմել ինտերակտիվ մեթոդով դասի ծրագիր:
- Կիրառել այդ ծրագիրը կրտսեր դպրոցականների հետ:
- Կատարել եզրահանգումներ:

Հետազոտական աշխատանքն իրականացրել ենք Շիրակի մարզի, Սպանդարյանի միջնակարգ դպրոցի չորրորդ դասարանի սովորողների հետ: Այս հետազոտական աշխատանքը բաղկացած է բովանդակությունից, ներածությունից, երկու գլուխներից՝ տեսական և հետազոտական: Վերջիններս էլ ունեն իրենց երկու ենթաբաժինները: Տեսական մասում քննարկվում է ինտերակտիվ մեթոդի սկզբունքների, գործնական կիրառության, ուսուցման մեջ տվյալ մեթոդի կիրառման առավելությունների մասին: Հետազոտական մասում ներկայացված է աշխատանքային ծրագիր, որն

իրականացվել է սովորողների հետ։ Աշխատանքում ներառել ենք նաև եզրակացություն, որում ամփոփված են հետազոտության արդյունքները, և օգտագործված գրականության ցանկ։

Գլուխ 1. Ինտերակտիվ ուսուցման մեթոդի կիրառման արդյունավետությունը կրտսեր դպրոցում

1.1 Ինտերակտիվ ուսուցման մեթոդի էությունն ու հիմնական սկզբունքները

Ուսուցման մոդելներն ապահովում են կրթական պրոցեսի որակը: Դրանց շարքում առանձնացվում են երեք հիմնական մեթոդ՝

1. պասիվ (էքստրաակտիվ ռեժիմ),
2. ակտիվ (ինտրաակտիվ ռեժիմ),
3. ինտերակտիվ (ինտերակտիվ ռեժիմ):

Այս հասկացությունը ծագել է անգլերեն «interact», «inter-փոխադարձ», «act-գործել» բառերից: Ինտերակտիվ ուսուցումը դա երկխոսությամբ ուսուցում է, որի ընթացքում աշակերտները համագործակցում են ոչ միայն ուսուցչի, այլև միմյանց հետ: Ինտերակտիվ մոդելն իր առջև նպատակ է դնում կազմակերպել ուսուցման այնպիսի պայմաններ, որոնց առկայությամբ բոլոր սովորողներն ակտիվորեն փոխգործակցում են[1]:

Ինտերակտիվ ուսուցման կազմակերպումը ենթադրում է կենսական իրավիճակների մոդելավորում, դերային խաղերի օգտագործում, հարցերի և խնդիրների ընդհանրացնող հետևություն՝ հանգամանքների և իրավիճակների վերլուծության հիման վրա, տեղեկատվական հոսքերի ներթափանցում գիտակցության մեջ, որը դրդում է ակտիվ գործունեության: Այդ իսկ պատճառով, դասի կառուցվածքի մեջ ներառվում են ուսուցման ինտերակտիվ մոդելի միայն տարրեր՝ ինտերակտիվ տեխնոլոգիաներ, այսինքն՝ կոնկրետ ձևեր և մեթոդներ, որոնք թույլ են տալիս դարձնել դասն անսովոր և ավելի հագեցած ու հետաքրքիր: Չնայած կարելի է անցկացնել ամբողջապես ինտերակտիվ դասեր [5]:

Վերջին տարիներին հաճախ են հակադրում ուսուցման ավանդական մեթոդներն ու թերևս ժամանակակից՝ ինտերակտիվ մեթոդները, ուսուցչակենտրոն և աշակերտակենտրոն մոտեցումները: Չնայած այդ հակադրումը կատարվում է այն համատեքստում, որ ինտերակտիվ և աշակերտակենտրոն մոտեցումները

բացարձակապես լավն են, իսկ ավանդական և ուսուցչակենտրոն մոտեցումները՝ վատը և անարդյունավետ։ Այս մոտեցումը գիտականորեն հիմնավորված չէ։ Ինտերակտիվ մոտեցումներն անհրաժեշտ են աշակերտներին մոտիվացնելու, ուսուցումը հետաքրքիր, բովանդակային ու մասնակցային դարձնելու համար։ Ըստ մասնագետների, ինտերակտիվ մեթոդն ապահովում և նպաստում է նոր նյութի արագ յուրացմանը, դրա պահպանմանն ու հետագա կիրառմանը։ Բայց այդ ամենը չեն բացառում նաև ավանդական մոտեցումների օգտագործումը, որոնք տարիների փորձ ու վստահություն ունեն։ Հարց ու պատասխանը, նյութը վերհիշելը, վարժանքները, ուսուցչի բացատրական խոսքը այսօր էլ կարևոր են ու անհրաժեշտ ուսուցման համար։ Բացի այդ՝ ինտերակտիվ ուսուցումն ունի որոշակի ռիսկեր, որոնք անտեսել չի կարելի։ Օրինակ՝ խմբային աշխատանքների ժամանակ որոշ աշակերտներ «գլուխ են պահում»։ Արտաքուստ թվում է, թե երեխաներն ակտիվ են, բայց վերջում պարզվում է, որ մնացորդային գիտելիքների մակարդակը ցածր է։ Հետևաբար՝ նոր մանկավարժության մեջ չպետք է լինեն մեթոդների և հնարների հակադրում։ Բոլոր մեթոդներն ու հնարները ինչ-որ իրավիճակում կարող են օգտակար լինել [4]։

Ինտերակտիվ ուսուցումը ենթադրում է այնպիսի մեթոդների համակարգի կիրառում, որը ոչ թե նախատեսում է ուսուցչի կողմից պատրաստի գիտելիքի մատուցում, մտապահում և վերարտադրություն, այլև ուսուցման ակտիվ ճանաչողական և պրակտիկ գործունեության ընթացքում գիտելիքների և հմտությունների ինքնուրույն ձեռքբերում։ Ակտիվ ուսուցման մեթոդների կիրառման նպատակն է՝

- սովորողին ներգրավել ինքնուրույն իմացական գործունեության մեջ,
- ստեղծել անձնական շահագրգռվածություն, դրդապատճառ ցանկացած ճանաչողական խնդիր լուծելու համար,
- սովորեցնել կիրառել սովորողների կողմից ձեռք բերված գիտելիքները։

Ակտիվ մեթոդների նպատակն այն է, որ գիտելիքների և հմտությունների ձեռքբերման գործընթացում ընդգրկվեն բոլոր իմացական գործընթացները՝ խոսքը, հիշողությունը, երևակայությունը, ուշադրությունը և այլն։

Դասավանդողն ունի որոշակի ֆունկցիաներ, որոնք իրականացնում է դասապրոցեսի ժամանակ։ Ներկայացնենք դրանք համառոտ։ Դասավանդողի ֆունկցիաներն են՝

1. Բացատրել սպասվելիք աշխատանքի նպատակը։ Դասի սկզբում հայտարարել թեման և քննարկվող հարցերը։
2. Բաժանել սովորողներին խմբերի և տալ հանձնարարություններ։
3. Չթողնել առանց ուշադրության սխալ մեկնաբանությունները, սակայն միևնույն ժամանակ միանգամից չտալ ճիշտ պատասխանը։
4. Հետևել, որ քննադատվի միտքը, կարծիքը, այլ ոչ թե միտքն արտահայտող սովորողը։
5. Օգնել աշակերտներին գալ ընդհանուր եզրահանգման և դասի վերջում անել եզրակացություններ, որոնք ունեն պրակտիկ և ընդհանուր նշանակություն։

Ուսուցչի ֆունկցիան աշակերտի ինքնուրույն աշխատանքի կազմակերպումն է։ Հայտնի է, որ նոր բան սովորելիս մարդը թույլ է տալիս սխալներ։ Ուսուցչի խնդիրը կայանում է նրանում, որ աշակերտի ուսումնական պրոցեսում կատարված սխալները ուսումնասիրի և վերլուծի։

Ինտերակտիվ ուսուցումն ունի իր սկզբունքները։ Դրանք են՝

- փոխազդեցությունը,
- փոխուսուցումը,
- ակտիվությունը,
- համագործակցությունը,
- ինքնարտահայտման խրախուսումը,
- հետադարձ կապը։

Ինտերակտիվ ուսուցման սկզբունքից զատ, ունենք նաև ինտերակտիվ դասի սկզբունքներ։ Դրանք են՝

- Դասընթացի բոլոր մասնակիցները հավասար են։
- Յուրաքանչյուր մասնակից իրավունք ունի իր կարծիքը ներկայացնել ցանկացած հարցի վերաբերյալ։
- Աշխատանքի մեջ պետք է ներգրավված լինի։
- Ոչ մի սովորող չի քննադատվում։

- Պետք է հոգալ մասնակիցների հոգեբանական պատրաստվածության մասին. խոսքը գնում է նրա մասին, որ ոչ բոլոր մասնակիցներն են հոգեպես պատրաստ ներգրավվելու այս կամ այն աշխատանքի մեջ: Այս առումով օգտակար է գովքը՝ ակտիվ մասնակցության ինքնադրսևորման համար: Շատ կարևոր է նաև հաշվի առնել տարիքային առանձնահատկությունները:
- Քննարկման ընթացքում անկանխատեսելի դժվարությունների դեպքում ուսուցիչը միջամտում է:
- Ակտիվ օգտագործվում է տեխնիկական ուսուցման միջոցներ՝ սլայդներ, ֆիլմեր, մուլտֆիլմեր, տեսահոլովակներ:
- Ինտերկտիվ ուսուցման մեթոդները թույլ են տալիս ակտիվացնել գիտելիքների յուրացման գործընթացը և դրանց ստեղծագործական կիրառումը գործնական խնդիրների լուծման համար:
- Ձևավորում է ինքնուրույն տեղեկատվություն գտնելու, վերլուծելու կարողությունը:
- Զարգացնում է այլոց տեսակետը լսելու, համագործակցելու կարողությունը:

1.2 Ինտերակտիվ ուսուցման մեթոդի կիրառման արդյունավետությունը կրտսեր դպրոցում

Ինտերակտիվ մեթոդը կիրառելի է նախակրթարանից մինչև ԲՈՒՀ-ական համակարգ: Պարզ է, որ այստեղ հատուկ ուշադրություն պետք է հատկացվի տարիքային առանձնահատկությանը, տարիքից կախված երեխայի մտավոր կարողություններին, քննարկվող թեմային, խմբի՝ այս պարագայում դասարանի, առանձնահատկություններին: Կրտսեր դպրոցական տարիքում անչափ կարևոր և առանձնահատուկ է նոր ուսումնական նյութի մատուցումը, քանզի երեխայի համար առաջատար գործունեության ձևը խաղն է, և երեխան խաղի մեթոդով ավելի հեշտ կարող է յուրացնել դասը, քան ուսուցչակետնտրոն դասավանդման մեթոդով: Այս տարիքային փուլի սովորողի համար արդիական ու կարևոր լինելով խաղը՝ այդուամենայնիվ նրա կյանք ներմուծված է նաև կրթական խնդիրը, որպես առաջատար գործունեության ձև:

Ե.Ա. Կարպենկոն և Օ.Ի. Ռայսն իրենց համահեղինակած ‹‹Ինտերակտիվ տեխնոլոգիան կրթության մեջ›› գրքում նշում են. ‹‹Ելնելով անձնական մանկավարժական փորձից, մենք հավատում ենք, որ ինտերակտիվ ուսուցման մոդելը հաջողությամբ իրականացվում է խաղերի նախագծման, վերապատրաստման, կլոր սեղանների, փոքր խմբերի աշխատանքի (զույգերով կամ ռոտացիոն եռյակով), գործարար և դերային խաղերի մեջ: Պետք է նշել, որ յուրաքանչյուր պարապմունքի ժամանակ կոնկրետ հմտության մշակումը պետք է իրականացվի "մինչև արդյունքը": Արդյունքն ակնհայտ է, մենք հավատում ենք և վստահ ենք, որ այդպես հեշտ է յուրացվում նյութը›› [5]:

Դեռ 2011 - 2012 թվականների վերլուծականով պարզ է դառնում, որ դասի նպատակներով պայմանավորված՝ ուսուցիչների 57.7%-ը (2011թ.) և 63.2%-ն (2012թ.) օգտագործում են փոխներգործուն և համագործակցային ուսուցման մեթոդներ ու հնարներ՝ ավելի հաճախ՝ մտագրոհը, T-աձև աղյուսակը, մտքերի քարտեզագրումը, պրիզման և այլն: Երկու տարիներին վերապատրաստված ուսուցիչների մոտ համեմատաբար զգալի տարբերություն է նկատվում՝ կիրառված մեթոդների հաջող զուգակցում (2011 թվականին վերապատրաստված ուսուցիչները 4.7%-ով

գերազանցել են 2012 թվականին վերապատրաստվածներին), ուսումնական գործողությունների ընթացքը՝ առաջադրանքների, վարժությունների, հանձնարարությունների առկայություն, որոնք վերաբերում են գիտելիքներին, հմտություններին, արժեքային համակարգին՝ չափանիշների գծով (2011 թվականին վերապատրաստված ուսուցիչները 9.6%-ով գերազանցել են 2012 թվականին վերապատրաստվածներին), նպատակներ, որոնք ակնկալում են տեսանելի արդյունք՝ ոչ ծավալուն առաջադրանքների, վարժությունների, հանձնարարությունների միջոցով չափանիշի գծով (2011 թվականին վերապատրաստված ուսուցիչները 75.4%-ով գերազանցել են 2012 թվականին վերապատրաստվածներին) [2]: Կրտսեր դպրոցական տարիքի սովորողի համար կարևոր է, որ ինքը մասնակից լինի ուսումնական պրոցեսին, ոչ թե պասիվ ունկնդրի: Ինտերակտիվ մեթոդը հնարավորություն է տալիս սովորել նոր նյութ, միաժամանակ մասնակցել այդ դասընթացին: Որքան ինտերակտիվ դասը տեխնիկական նորույթով է հագեցած՝ տեսաֆիլմով, տեսասահիկով, այնքան ավելի հրապուրիչ ու տպավորիչ ներգործություն է ունենում սովորողի վրա՝ ապահովելով նյութի արագ յուրացում:

Գլուխ 2 Հետազոտական աշխատանք

2.1 Ինտերակտիվ ուսուցման մեթոդով իրականացվող դասի ծրագիր

Մեր հետազոտական աշխատանքն իրականացրել ենք Շիրակի մարզի, Սպանդարյանի միջնակարգ դպրոցի չորրորդ դասարանի թվով 25 սովորողի հետ։

Մեր աշխատանքում նախ հստակեցրինք, որ աշխատելու ենք մայրենի լեզվի դասաժամին և դրանից հետո միայն քննարկման, ուսումնասիրման նյութն ընտրեցինք։ Ինտերակտիվ դասընթացի համար ընտրել ենք «Հայաստան» թեման։ Ինտերակտիվ մեթոդով կազմված աշխատանքի ընթացքում նախատեսեցինք սովորողներին ուսուցանել հայ տարբեր հեղինակների բանաստեղծություններ՝ նվիրված հայրենիքին։ Առանձնացրինք՝

- Պատվական Խաչատրյան «Հայաստան»,
- Հովհաննես Շիրազ «Իմ սուրբ հայրենիք»,
- Համո Սահյան «Հայաստան ասելիս»։

Այս նյութերն ընթերցելու ենք մայրենի լեզվի դասաժամերի ընթացքում։

Ինտերակտիվ մեթոդով դասն իրականացնելու ընթացքում նպատակ ունենք ոչ միայն ծանոթացնելու այս ստեղծագործություններին, այլև ուսուցանելու և զարգացնելու բազում հմտություններ։ Այսպես՝ սահուն, առոգանությամբ ընթերցել բանաստեղծությունները, ուսուցանել նոր բառերի ուղղագրությունն ու արտասանությունը, սովորեցնել նոր բառակապակցություններ, հոմանիշ և հականիշներ։

<u>Դասի ընթացքը</u>

Չորրորդ դասարանի սովորողների հետ ընթերցել վերը նշված բանաստեղծությունները, այնուհետև քննարկման միջոցով մեկնաբանել բանաստեղծության իմաստը և անծանոթ բառերը։ Սովորողներին ցույց տալ Մարտիրոս Սարյանի «Հայաստան» նկարը, ապա մտագրոհի միջոցով թվարկել Հայաստանին բնորոշող բառերը, որոնք սովորողները կգրեն գրատախտակին։ Կքննարկվեն ՀՀ պետական խորհրդանիշները և կմեկնաբանենք դրանցից

յուրաքանչյուրի խորհուրդը։ Նախատեսում ենք խոսել նաև ՀՀ կազմավորման, սեպտեմբերի 21-ի խորհրդի մասին։ Նաև աշակերտները կսովորեն ՀՀ մարզերը, տեսարժան վայրերը, սահմանակից պետությունները։ Դասի ավարտին սովորողները կերգեն ՀՀ պետական օրհներգը։ Ամբողջ վերը նշված աշխատանքը նախատեսում ենք իրականացնել հարցերի ու պատասխանների միջոցով, որտեղ սովորողը դասի ակտիվ մասնակիցը կլինի։ Թեմայի գլխավոր բառակապակցություններն են՝

- Ճշմարիտ խորհուրդ,
- Ամուր տուն,
- Ազնիվ քրտինք,
- Միասին աշխատանք։

Այս բառակապակցություններով հանձնարարվում է կազմել նախադասություններ։ Հանձնարարել սովորողներին նկարել Հայաստանը բնորոշող պատկերներ, ապա փակցնել պաստառին և մեկնաբանել իրենց նկարներն ու ներկայացնել Հայաստանի մի մասնիկ լինելը։ Նկարները փակցնելուց հետո սովորողները կկատարեն ‹‹ Հայաստան›› երգը։

Մենք այս թեման ինտերակտիվ ուսուցման մեթոդով դասավանդելիս ակնկալում ենք, որ սովորողները մեծ հետաքրքրություն դրսևորելուց բացի, առավել հեշտ կյուրացնեն նոր թեման, նոր բառերն ու բառակապակցությունները։ Կբարձրանա նաև սովորողների ընթերցման որակը։

Վերջնարդյունք

Դասընթացի ավարտին աշակերտները կճանաչեն Հայաստանի Հանրապետության խորհրդանիշները, հայ մեծերի արտահայտած մտքերը Հայաստանի մասին։ Դաստիարակել սովորողների մեջ սերն առ հայրենիք։

2.2 Ինտերակտիվ ուսուցման մեթոդով իրականացվող դասի ծրագրի կիրառումն ու վերլուծությունը

Մեր հետազոտական աշխատանքն իրականացնելուց հետո պարզեցինք, որ այս մեթոդով սովորողներն առավել հեշտ են յուրացնում իրենց համար անծանոթ նյութը։

Երբ ուսումնական գործունեության ընթացքում սովորողների հետ քննարկվում է որևէ նյութ, նրանք ակտիվ կենտրոնանում են բուն նյութի վրա, սովորում լսել միմյանց կարծիքը։ Մեր այս աշխատանքում պարզեցինք մեր համար մի կարևոր բան, որ սովորողները մեծ հետաքրքրությամբ են լսում իրենց ընկերներին, քննարկում են, սովորում միմյանցից։ Հետազոտական այս աշխատանքում խոցելի էր միայն մի կետ. բոլոր սովորողների ակտիվության ապահովումը դասարանում։ Դասարանում ունենք սովորողներ, ովքեր մշտապես առանձնակի ակտիվություն չեն դրսևորում ուսումնառության ընթացքում։ Այս մեթոդով աշխատանքն էլ բացառություն չէր, մեր երկու չորրորդ դասարանի սվորողներին ողջ քննարկումների ժամանակ նստեցրինք առավել ակտիվ սովորողների հետ և անընդմեջ ներգրավեցինք քննարկումներին։ Քանի որ հետազոտությունն իրականացրինք չորրորդ դասարանի սովորողների հետ, ովքեր բավարար չափով հասուն են, մեր այս նախագծից հետո հարցում իրականացրինք, պարզելու արդյո՞ք իրենց դուր եկավ այս մեթոդով և այս ոճի դասապրոցեսը։ Սովորողները հայտնեցին իրենց գոհունակությունը, անկեղծացան, որ մեծ հետաքրքրությամբ մասնակցեցին այս դասերին։ Այս մեթոդով ուսուցման ընթացքում՝

- Հեշտ է մատուցել նոր գիտելիք, երբ սովորողն ընդհանարապես պատկերացում չունի տվյալ թեմայից։
- Սովորողն արագ է կենտրոնանում դասապրոցեսին, քանզի շահագրգիռ է անելիքներով։
- Սովորողն առավել արագ ու արդյունավետ յուրացնում է նյութը։

- Սովորողը սեղմ ժամանակահատվածում աշխատում է բազում շերտերով՝ գրել, ընթերցել, տրամաբանել, քննարկում իրականացնել, զարգացնել բանավոր խոսքը։
- Սովորողը հեշտ տպավորվում է նոր նյութով, ապա ակտիվ գործածում ստացած նոր գիտելիքները։

Սովորողների մեծամասնությանը գրավիչ թվաց մայրենի լեզվի ժամին երգելու, նկարելու գործունեությունները, որն ըստ իրենց հաճելի ու հետաքրքիր էր։ Կարծում ենք , որ ինտըերակտիվ մեթոդն ուսուցման ընթացքում այն մեթոդներից չէ, որից ամեն օր կարելի է օգտվել։ Այն կիրառելի է ժամանակ առ ժամանակ, նյութի ծավալով պայմանավորված։

Եզրակացություն

Մեր այս հետազոտական աշխատանքն իրականացնելիս ընթերցեցինք և ուսումնասիրեցինք բազում մանկավարժական հոդվածներ, գիտական գրականություն, ապա իրականացրինք հետազոտական աշխատանք: Այս ողջ աշխատանքն իրականացնելուց հետո եկանք բազում եզրահանգումների: Այսպես՝

Կրտսեր դպրոցական տարիքում սովորողի առաջատար գործունեության ձևը ուսումն է, սակայն պակաս կարևոր չէ նաև խաղը:

Կրտսեր դպրոցականը նոր նյութը սիրով և արագ յուրացնում է, երբ այն մատուցվում է խաղարկային, հետաքրքիր մեթոդներով, բազում դիդակտիկ նյութերով:

Պարզեցինք նաև, որ վերջին տարիներին մանկավարժներն առավել շատ են կիրառում ինտերակտիվ մեթոդը՝ հաշվի առնելով վերջինիս արդյունավետությունն ուսուցման ոլորտում:

Ինտերակտիվ մեթոդով իրականացվող դասի նյութը պետք է լինի նոր:

Ինտերակտիվ մեթոդի շնորհիվ հնարավոր է դասարանի ամենապասիվ սովորողին անգամ ներգրավել քննարկումներին:

Պարզեցինք նաև, որ մայրենի լեզվի ընթացքում ինտերակտիվ մեթոդի կիրառումը շատ ակտուալ ու կարևոր է, քանզի սովորողները միաժամանակ մի քանի հեղինակի ստեղծագործություն, որոնց գլխավոր թեման նույնն է, կարողանում են համեմատել, վերլուծել: Մեր պարագայում գլխավոր քննարկվելիք թեման հայրենիքն ու հայրենասիրությունն էր:

Ինտերակտիվ մեթոդով դասաժամին երեխան պասիվ հայցորդ չէ, այլ ակտիվ մասնակից:

Ինտերակտիվ մեթոդի կիրառման ժամանակ սովորողների ուշադրությունը կենտրոնացված է մնում դասի նյութի վրա և ավելորդ անգամ դասարանի վարքի ձևերը կառավարելու կարիքը չի լինում:

Ինտերակտիվ մեթոդով դասապրոցեսի ընթացքում ակտիվ գործում ու զարգանում է կրտսեր դպրոցականի իմացական գործընթացները, մասնավորապես՝ ուշադրությունը, հիշողությունը, խոսքը։

Դասապրոցեսի ընթացքում անընդմեջ հնչում են նոր մտքեր, վերլուծություններ, նոր գիտելիք, կրկնվում ու քննարկվում են այնքան, մինչև սովորողները յուրացնում են։

Գրականության ցանկ

1. Դպիր մանկավարժական հոդվածների ժողովածու, համար-8 (72)
2. Համեմատական վերլուծություն. 2013 թ./ Երևան
3. Ուսուցման արդյունավետ հնարներ/ Ս. Խաչատրյան.- Եր.: Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամ, Հայաստան 2020.- 74 էջ
4. Նախաշավիղ Գիտամեթոդական Հանդես 5. 2013
5. Ольга Райс, Елена Карпенко. «Интерактивные технологии в обучении». Педагогика нового времени ISBN 978-5-4474-9670-8
6. Подласый И.П. «Педагогика». Новый курс: учебник для студ.пед.вузов. — М.: ВЛАДОС, 1999. — Кр. 1: Общие основы. Процесс обучения. — 576 с.: ил.
7. Т.Г. Мухина «АКТИВНЫЕ И ИНТЕРАКТИВНЫЕ ОБРАЗОВАТЕЛЬНЫЕ ТЕХНОЛОГИИ». Учебное пособие, Нижний Новгород ННГАСУ 2013.